ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2026 թվականի № -Ա

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՄԱՍՐԻԿ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի №179-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԷՖԱՐՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության և «ՖՈՏՈՎԱՏԻՈ ՌԵՆՅՈՒԱԲԼ ՎԵՆՉՐՍ» ԷՍ. ԷԼ.–«ԷՖԷՍԷԼ ՍՈԼԱՐ» ԷՍ. ԷԼ.-ի միջև 2020 թվականի հունիսի 26-ին կնքված՝ Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքում Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և շարադրված կառավարության աջակցության համաձայնագիրը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի №397-Ա որոշմամբ հաստատված «ԷՖԱՐՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայի պայմանների №1 հավելվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 15.369 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 14-ի ««ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» փակ բաժնետիրական ընկերության «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանելու մասին» №179-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
ապրիլի 2026թ.